կերի երևոյթ կը ստանար. իսկ առաջնիս յերևան կու գային Լեատիոյ արքունի ապարանք, Օրիանտա՝ Կոստանդին Նախարարին Գիւղատունն, Ալուփքա՝ Վորոնցով (Ագուաեան) կոմին կրանիտեայ դղեակն, և այլոց մեծամեծ իշխանաց ամրանոցք, մինչև որ հասանք ծովով Պայտառ կոչուած կրճին կամ լերանց անցքին ստորոտը։ Նշանաւոր է այս տեղս. շատ ճանապարհորդք 'ի Տաւրիայ գալով, ծովու ճանապարհին կը նախագասեն ցամաքի երկար ճամբան 'ի Սևաստապոլէ Եալբթա անցնելու, միայն այս կրճէն անցնելու հաճութիւնը զգալու համար։ Վասն զի խիտ առ խիտ անտառները քարուխիճ և օձապտոյտ ճանապարհով անցնելէն վերջը, երբ կը հասնի ճանապարհորդն այս Պայտառ կամ Դուռն Պայտառի կոչուած անցքին բերան, յանկարծ առաջը կը բացուի համատարած ծովը, մէկ կողմանէ ալիքներն՝ հորիզոնին վրայ՝ երկնից կցելով, միւս կողմանէ կանաչագեղ բլուրները փայփայելով՝ անհանդարտ կոհակք մինչև ցԵալբթա։

Յառաջ վարելով ճանապարհը, կէս օրէն վերջը ժամը մէկին հասանք 'ի համբաւաւորն Սևաստապոլ։ Այս քաղաքս առաջին Արևելեան պատերազմէն մինչև երկրորդն՝ քսան և վեց տարի անխնամ մնալուն պատճառաւ, ցարդ աղիտաւոր տեսարան մի կը ներկայացընէ ճանապարհորդին. մեծամեծ բազմայարկ անծածկ և աներդիք շէնքեր՝ իբրև մահագոյժ կանգուն կմախքներ, իրենց կոյր և անլոյս աչքերով և անլեզու բերանով, — անդուռն, և անփեղկ պատուհաններով, — յայտնի կը քարոզեն քաղաքին անցեալ փառքը, և առհասարակ անկայուն վիճակ իրաց աշխարհի։ Նոյնը կը քարոզէ